



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

15

ԳԼՈՒԽ ԾԻԷ ՎԱՍՆ ՈՉ Է ՊԱՐՏ ՄԵՌԱՆԵԼ ՀԱՐՑ ՎԱՍՆ ՈՐԴՈՅ, ԵՒ ՈՉ ՈՐԴԻՔ՝ ՎԱՍՆ ՀԱՐՑ

Մի՛ մեռանիցին հարք ընդ որդոց, եւ մի՛ որդիք՝ ընդ հարց, այլ իւրաքանչիւր ոք ի մեղս իւր մեռանիցի: Եւ զայս ասէ յաղագս այնորիկ, որ թէ պատահի մահապարտ լինել ըստ օրինաց, հարք եթէ կամիցեն վասն գորդիսն ապրեցուցանելոյ մեռանիլ, մի՛ մեռցին, այլ մեռցի որդին մահապարտ, զի մի՛ թիւրեցի դատաստանն: Նոյնպէս եւ մի՛ որդիք ընդ հարց մեռցին: Նաեւ դատաւորք, թէ ոչ կարասցեն գորդիս մահապարտս ըմբռնել, ոչ պարտին զհայր ի մահ դատապարտել: Եւ այս ի մեզ հաստատուն կացցէ:

ԳԼՈՒԽ ԾԻԸ ՎԱՍՆ ՈՐՔ ՉԴԱԴԱՐԻՆ ՅԻՐԱԻՈՒՆՍ

Մի՛ խտտորեցես զիրաւունս եկին եւ որբոյն եւ այրոյն: Դատաւորաց դնէ օրէնս՝ ոչ վարիլ կաշառօք եւ այլօք պատրանօք, որպէս եցոյց յայլսն, եւ եթէ զայս արասցէ՝ անկցի ի պատուոյն:

ԳԼՈՒԽ ԾԻԹ ՎԱՍՆ ՈՐ ԶԱՅՐ Ի ՄԱՐԴՈՅ ԻՐՔ ԳՐԱԻԿԱՆԵՆ

Մի՛ գրաւեցես զգրաւ այրոյն զձորձս նորա: Զի թէպէտ եւ յայլսն ներեաց սահմանան զգրան, այլ աստ եցոյց հարկաւոր ոչ գրաւել զայրոյ, ուսուցանելով

նոցա զխնամակալութիւն յիրմէ, որպէս յԵգիպտոս ամենագանս, զի արտաքոյ է դատաստանի զգուել զնոսա:

ԳԼՈՒԽ ԾԼ ՎԱՍՆ ԱՐԺԱՆԱԻՈՐԱՅ ԳԱՆԻՑ

Յատեան դատաստանի, ըստ որում եւ իցէ, յորժամ արժանի գանի իցէ, եթէ ոչ ըստ Օրինացն քառասուն, սակայն անվնաս: Արժան է դատաւորաց վարիլ նովաւ ի խրատ ստահակաց:

ԳԼՈՒԽ ԾԼԱ ՎԱՍՆ ԹԷ ԿՌՈՒԻՆ ԵՐԿՈՒ ՄԱՐԴ, ԵՒ ԿԻՆՆ ԹԱՓԷԵՒ ՎՆԱՍԻ

Եթէ կռուիցին երկու արք, եւ թափելոյ աղագաւ կին միոյն բունն հարկանէ զյաղթողի առն, ըստ Օրինացն է հատանել զձեռնն, այլ մեզ՝ զինն ձեռինն, որպէս ցուցեալ է իւրաքանչիւր զգայութեանցն:

ԳԼՈՒԽ ԾԼԲ ՎԱՍՆ ՈՐ ԶԳԵՐԵԶՄԱՆՍ ԵՒ ԶՄԵՌԵԱԼՍ ԿՈՂՈՊՏԵՆ

Զդիակողոպուտս եթէ ընթոնեսցի եւ ապա կամօք խոստովանեալ՝ ոչ մեոցի, իսկ եթէ ոք ոչ սպանցէ, քննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչեւ ի մահ որոշեսցի, քանզի տեղիք ապաշխարութեան չիք նմա: Յայտ է յասացելոցս, թէ անգղջիցն մահ որոշեաց, այլ այնպիսեացն արեան լիցի զին ըստ ցուցելոյ օրինակին, դարձեալ եւ՝ ապաշխարութիւն պատշաճի: Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ իրաւացի:

ԳԼՈՒԽ ԾԼԳ ՎԱՍՆ ԱԿԱՄԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ

Եթէ ոք անմեղ զնասցէ ողետր եւ ոչ զոք ունէր թշնամի յառաջ պատահեալ, այլ թէ որ ամենեցուն գողն եւ աւագակն նմա դիպեսցի, եւ սպանցէ սա զնոսա, մի՛ իբրեւ սպանող դատեսցէ զնա սուրբ եկեղեցի: Բայց վասն ահագին սեղանոյն սրբեսցէ զանձն ատուրս սակաւ՝ զմտաւ ածեալ, թէ ընդէ՞ր իսկ եւ ակամայ դիպեցան, թէպէտ եւ յԱստուծոյ իցէ մատնութիւնն: Կարծեցուցանէ եւ յաղագս քահանայից վասն ասելոյն՝ ահագին սեղանոյն, այլ հասարակ ամենեցուն է: Բայց այս դատաստան եկեղեցոյ դատաւորաց եւ ոչ արտաքնոց է դատել,

գիրաքանչիրոցն օգուտ ըստ իրին:

ԳԼՈՒԽ ՃԼԴ ՎԱՍՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ

Ջիհնունս եկեղեցոյ եպիսկոպոսն միայն իշխեսցէ ծրագրել ուղղափառութեամբ, կամ քորեպիսկոպոսն, կամ պերետուտն՝ հրամանաւ եպիսկոպոսին: Ապա թէ առանց եպիսկոպոսին կամ քորեպիսկոպոսին որ յանդգնեսցի՝ քակել գիհնունսն հրամայեցաք. ապա թէ թողցի՝ երկրորդումն սահմանք կարգեսցին, եւ այնպէս կարգ եկեղեցոյն լինի անըստգտանելի: Գիտելի է, զի քորեպիսկոպոսք երկու են, մին՝ ձեռնադրեալն եւ մին՝ ոչ. եւ պերետուտ է, որ այժմ է բուտ: Եւ եթէ ի պատահումն հայիցի եպիսկոպոսն եւ ի գեղջն եւ ոչ քակեսցէ, երկրորդել հրամայէ գկարգն: Եւ այդ այդոցիկ դատաստան է հաստատուն:

ԳԼՈՒԽ ՃԼԵ ՎԱՍՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Ջեպիսկոպոս արժան է, որք յաշխարհին եւ վիճակին եպիսկոպոսք իցեն, նորինքք նստուցանել յաթոռ. ապա թէ վասն փութոյ ինչ եւ վասն հեռաւորութեան ընկերացն՝ երեք եպիսկոպոսք կամօք այնոցիկ, որք հեռի են, թղթովք վկայութեան նստուցանեն: Բայց գպատիւ եւ գշնորհս գլխաւորին արժան է տալ, այսինքն՝ կաթողիկոսին. կամ եղել մեծ ժողովոյն: Կարգաւորապէս գձեռնադրութիւն հրամայէ լինել. նախ ընտրել բազմաց, եւ հաւանութեամբ ամենեցուն ձեռնադրէ կաթողիկոսն, կամ հրամանաւ նորա՝ երկուքն կամ երեքն: Այլ անուն կաթողիկոսի աստ ցուցաւ գլխաւոր լինել այլոցն, բայց այսուհետեւ մամոնայ:

ԳԼՈՒԽ ՃԼԶ ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ Ի ԿԱՐԳԷ ԵՒ ՅԱՂՕԹԻՅ ՄԵՐԺԵԱԼ ԵՆ

Որք ի կարգէ եւ յաղօթից մերժեալ են, կամ ժողովրդական որ կամ ի կարգէ պաշտօնէից, եթէ երթեալ ուրեք գինքն ի կարգ արկցէ, մի՛ ընկալցին: Եւ որ այլոց վարդապետի բանադրեալ իցէ եւ կամ մերժեալ, այլ վարդապետ մի՛ մերձեցուցէ կամ ի կարգ արկցէ, բայց եթէ հաւաստեալ քննութիւն արասցեն, բանիւ վարդապետութեան բժշկել եւ անդէն հնազանդել ընդ բուն վարդապետան: Ապա թէ վասն մեղաց եւ չար գործոց մերժեալ իցէ ի սուրբ եկեղեցոյ, դեղօք ապաշխարութեան բժշկեսցեն: Եւ այս բարեկարգութիւն

աստուածային դատաստանաւ է. ոչ զոր առանց գիտութեան ընդունել, եւ վարդապետաց չքանահել զմիմեանս եւ զանկարգսն անդրէն դարձի իմաստութեամբ բժշկել:

ԳԼՈՒԽ ԾԼԷ ՎԱՍՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

Նախնեացն սովորութիւն կացցէ յԵզիպտոս, զի Աղեքսանդրի եպիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ, վասն զի Հռոմայ եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս եւ Անտիոքացոց եւ յայլ իշխանութիւնս պատիւ մեծութեան պահեսցի եկեղեցեաց: Եւ ամենեցուն նմանապէս յայտնի լիցի, զի թէ ոչ կամօք կաթողիկոսին լիցի եպիսկոպոս, զայնպիսին մեծ ժողովն որոշեաց, զի մի՛ եւս իցէ եպիսկոպոս: Ապա թէ միաբան ամենեցուն ընտրելով ճշմարտութեամբ ըստ կարգի եկեղեցոյ արժանի առնիցեն, երկու կամ երեք ըստ անձին անզգամութեան կամ հակառակութեան ընդդէմ լինիցին, բազմացն ընտրութիւն հաստատեսցի: Վասն զի սովորութիւն կալաւ եւ կարգ նախնեացն, զի Երուսաղէմի եպիսկոպոսն պատուեսցի, ընկալցի պատիւ, զի մայրաքաղաքացն ըստ արժանի պատուին իւր պահեսցի: Չոր յառաջն յիշատակեաց զանուն կաթողիկոսի, աստ ցուցանէ, զի ըստ նախնեացն սովորութեանց եւ ինքեանց կացցէ: Եւ ըստ չորից աւետարանչացն զայդոսիկ նշնակէ, եւ յայլ իշխանութիւնս նմանապէս, զի թէ իցեն առաքելական աթոռ եւ թէ չիցեն՝ հրամայէ կաթողիկոս լինել. եւ թէ աթոռն Յովհաննոս յԵփեսոսէ ի Բիւզանդիա փոխեսցաւ՝ պատուելոյ աղագաւ, այլ ոչ կաթողիկոսութեան պատճառաւ: Եւ որոշէ, որք հրամանաւ կաթողիկոսին չձեռնադրին, յորոց յայտ է, զի հրամանաւ նորա ձեռնադրին: Եւ թէ պատահին ոչ յիւրմէ, այլ ի բազմացն ընտրութենէ, ամենայն ուրեք ճշմարիտ է, եւ ի ձեռնադրելն կաթողիկոս:

ԳԼՈՒԽ ԾԼԸ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ՉԱՅԼՈՑ ՎԻՃԱԿ ԵՒ ԶԺՈՂՈՎՈՒՐԴ ՅԱՓՇՏԱԿԵՆ

Վասն բազում յուզիցն եւ մեծամեծ ամբոխիցն, որ լինին ի կողմանս կողմանս, որք եպիսկոպոսք լինին եւ զայլոյ վիճակ յափշտակել ջանան, եւ որք երիցունք լինին եւ այլոյ քաղաքի եւ ժողովրդեան ցանկան յափշտակալ, և կամ եղել մեծ ժողովոյս, զի զայնպիսին դադարեցուցանեն յիւրաքանչիւր վիճակի: Ապա թէ

բոնութեամբ կամ կաշառօք զգործն զայս յանդգնեացի գործել եւ ընդդէմ եկեացէ առաջնորդական կանոնին, կամ եղեւ մեծ ժողովոյս, զի զայնպիսիսն ընկեացեն յաթոռոյն եւ ի կարգէ քահանայութեան եւ բնաւ իսկ ի բաց մերժեացեն ի պաշտմանէն, եւ այնուհետեւ եղիցի քեզ իբրեւ զմի յանգզամաց, զի որում տուեալն իցէ՝ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն զիտէ ունել՝ եւ գոր ունի բարձցի ի նմանէն: Ոչինչ անյայտ է այս հոգեւոր կանոնական դատաստան, եւ բազմաց ըստ այսմ մերժելի է այժմ:

ԳԼՈՒԽ ԾԼԹ ՎԱՍՆ ԱՆԿԱՐԳԱՊԷՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Վասն այնոցիկ, որ ի կարգին իցեն եւ ի կանոնին եւ յուխտի եկեղեցոյ եւ յազահութիւն եւ ի զօշաքաղութիւն անկանիցին, զարծաթ ի վարձու տան եւ տոկոսեօք պահանջեն եւ մոռանան զբարբառ աստուածային Գրոցն, որ ասէ՝ զարծաթ իւր ի վարձու ոչ տայ եւ այլն, եւ, մանաւանդ, ծոյլ եւ պղերզ՝ ի պաշտմանն եւ թուլասիրտ՝ յաղօթս, մեղկ եւ ծոյլ՝ ի հաւատս, այնպիսոյն ասէ Գիր՝ վայ որ թողեալ իցէ զուսումն մանկութեան եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն: Կամ եղեւ մեծ ժողովոյս՝ զայնպիսին մերժել ի կարգէն եւ կամ բարեսէր կամօք յողորութիւն ածել: Լուիցեն քահանայք զվճիռ կանոնական դատաստանին եւ զարհուրեացին, ապա թէ ոչ՝ վերջին եւ անաշառ դատաստանաւ դատելոց են:

ԳԼՈՒԽ ԾԽ ՎԱՍՆ ՈՐ ԶԶԵՌՆ ՏՈՒԵԱԼ ԱՂԶԻԿ ՅԱՓՇՏԱԿԻՑԷ

Որք միանգամ խօսեալ աղշկունք են եւ զուգեալ գտանիցին, եւ յետ այսորիկ այլք յափշտակիցեն, կամ եղեւ զի անդրէն տացեն, որում խոսեալն էր. թէ եւ ի բոնութիւն ապաստանի՝ մի թողցեն: Մի զզուգեալն եւ զխօսեալն համարի եւ անդրէն դարձուցանել, թէ եւ պսակեացի ընդ յափշտակողին: Եւ այդոցիկ ճշմարիտ է դատաստան:

ԳԼՈՒԽ ԾԽԱ ՎԱՍՆ ՄՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Որք յուխտի անդ իցեն՝ երիցունք, կամ սարկաւագունք, կամ այլ որ ի պաշտօնէից եւ հեռի իցեն ի մտոյ, եւ միտք յօժարեացին ի ճաշակել, համարձակ կերիցեն եւ մի՛ զաղտաբար, ապա թէ կամեացին՝ պահեացեն: Այլ թէ որ պիղծ համարեացի

գբանջար կամ գիաց, որ մտտ իցէ, ոչ ընդունին գնա ի կարգ եկեղեցոյ:
Ուխտական՝ յայտ է՝ զի զամուսնացեալս եւ զկուսանս եւ որք միանգամ յեկեղեցի
են՝ անուանէ: Ապա ուրեմն վայրապար է ազգացն Յունաց եւ մեր գմիմեանս
բամբասել, զի զերկոսինն, ասէ, ընդունիլ ի կանոնաց: Արդ, բարիոք է չուտելն,
քան ուտելն, թէպէտ եւ ոչ բամբասի, որպէս ի մեզ գտանին բազում պահողք. այլ
արտաքոյ դատաստանի է գմիմեանս դատելն:

ԳԼՈՒԽ ԾԽԲ ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՉԻՑ

Վասն ընչից, որ անուանեալ իցէ եկեղեցոյ, զինչ եւ իցէ՝ եթէ գեղ եւ եթէ այլ ինչ,
մինչչեւ եպիսկոպոս լեալ ի տեղոջն եւ երիցունք վաճառիցեն, իշխան լիցի
անդրէն ի նոյն պահանջել. բայց եպիսկոպոսն կշռեսցէ զիրան եւ զարժանն, եթէ
մարթ է առնուլ զգինն կամ դարձուցանել: Կանոնականս հրաման անվաճառելիս
լինել զեկեղեցոյսն կամի եւ իշխան՝ զեպիսկոպոսն եւ ոչ զքահանայս, եթէ առնուլ
կամ դարձուցանել եպիսկոպոսն տեսցէ: Այսպիսի է. զի թէ որ գնեաց՝ ամօք գնոյն
չափ կերեալ իցէ՝ զգինն ոչ դարձուցանել, ապա թէ շիցէ ինչ շահեալ՝
դարձուցանել: Ըստ այսմ օրինակի զկշռելն ասէ: Իդէպ է եւ զայս զիտել, զի
այլազգ ոչ վաճառի եկեղեցոյքն, բայց եթէ վաճառեսցի զանպատշաճսն եւ այլ եւս
անկատր գնեսցէ նովին գնովն: Եւ այդ ընդունելի դատաստան է յեկեղեցի:

ԳԼՈՒԽ ԾԽԳ ՎԱՍՆ ՈՐ ԿՈՒՍՈՒԹԻՒՆ ԽՈՍՏԱՆԱՅ ԵՒ ՍՏԷ

Վասն այնոցիկ, որ ի չափ հասեալ իցեն եւ կուսութիւն խոստանան պահել եւ
ստիցեն խոստմանն եւ ի շնութիւն անկանին, կուսան այնուիետեւ ոչ կարել լինել,
այլ եղիցի նա որպէս զայն, որ երկուս կանայս առեալ իցէ, եւ զսահման նոցին
կալցի, եւ զապաշխարութիւն՝ երկու ամ առ դրանն ընդ ձեռամբ եւ մի ամ մտեալ
յեկեղեցին ընդ ապաշխարողսն ելցէ: Եւ զջերմութիւն ապաշխարութեանն
տեսցեն, եւ հաղորդեսցի օրինացն, բայց յօժումն քահանայութեան մի՛ մերձեսցին:
Չայս յայտնագոյն ի Նիկիական յերեսուն գլխին ասէ, այլ աստ՝ որ ամուսնանայ
եւ շնայ: Յայտ է, զի զշնութեան ապաշխարել, այլ ամուսնութեանն երկակացն է,
ուստի ոչ կարել լինել քահանայ. եւ թէ երկրորդ ամուսնանալ՝ իբր զերրորդ
համարեալ է: Բայց տեսցեն եւ զհասակ խոստովանողին եւ այդպէս դատեսցեն:
Եւ այդ ըստ այդմ լիցի: Չայս եւս գտցես ի Լուսաւորչին կանոնսն յերեսուն գլխին:

ԳԼՈՒԽ ՃԽԴ ՎԱՍՆ ՁՅՂԻ ԿԱՆԱՅՍ ՄԿՐՏԵԼ

Չյոի կանայս արժան է մկրտել՝ յորժամ եւ կամին, զի ոչ յայսպիսի իրս հաւասարեալ է ծնողն ընդ ծննդեանն, այլ արժան է ամենայն իրօք եւ կամօք գլօժարութիւնն ցուցանել առ ի խոստովանութիւն ընդունելութեան մկրտութեանն: Եւ զայս յաղագս երկիւղի մահու, որ յերկունսն է, թողացուցանէ, եւ յաղագս այնորիկ անխեղճ են մկրտեալն եւ մկրտողն: Եւ զի մի՛ կարծիցի մանուկն ընդ նմին մկրտիլ, յաւելու զպատճառն: Հաւանելի է այս իրաւունք յեկեղեցի:

ԳԼՈՒԽ ՃԽԵ ՎԱՍՆ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԻՆ ՊՈՌՆԻԿ

Եթէ որ արձակեսցէ զկին իւր վասն բանի պոռնկութեան եւ կամ այլ չարագործութեան, որ ոչ միայն այրն վկայէ, այլ եւ բազումք վկայեն վասն չար գործոց նորա, արձակեսցէ. ընդունի զկանոնս: Բայց մի՛ ապաշխարեսցէ, այլ ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի օրինացն եւ եթէ կամեսցի՝ կին արասցէ, եւ կինն այլ այր չիշխէ առնուլ, մինչ կենդանի է այր նորա: Եւ զայս թէպէտ եւ գրեալ է մեր զդատաստան՝ երկրորդեցաք, զի ոչ վասն պոռնկութեան, այլ եւ յաղագս այլ չար գործոց հրամայէ թողուլ՝ կախարդութեան, դեղատոութեան եւ այլոց այսպիսեաց: Եւ զի դարձեալ միմեանց կամօք ամուսնանալ, որպէս լուեալ էաք՝ ասացաք: Եւ զի մի՛ ընդդէմ կարծեսցի կանոնաց, որպէս եւ կամեսցին, այնպէս կալցին:

ԳԼՈՒԽ ՃԽԶ ՎԱՍՆ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԻՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՄԲ

Իսկ եթէ ոչ վասն պոռնկութեան եւ ոչ վասն չար գործոց եթող զկին իւր, այլ վասն վատաբարութեան, որպէս թէ այլում ակն եղեալ իցէ, զայսպիսիս ոչ ընդունին կանոնք, մինչեւ ցդառնալ նորա առ կինն. եւ ընդ յանցանաց եւթն ամ ապաշխարութիւն կալցի, հինգ ամ՝ արատաքոյ, երկու՝ ի ներքս: Ապա թէ ոչ դարձցի առ բուն կինն իւր, զկեանս տան իւրոյ բաժանեսցէ. զկէսն կնոջն տացէ եւ տուգանս՝ յեկեղեցի, զի զպսակն օրհնութեան անարգեաց: Եւ ինքն զաւուրս կենաց իւրոց պոռնիկ կոչեսցի եւ մի՛ մտցէ յեկեղեցի Աստուծոյ, այլ ի դուռն աղօթեսցէ, ողորմութեամբ տրօք տնանկաց եւ ջերմեռանդն արտաստօք գլետին թօշակն ընկալցի: Ապա թէ կինն մեռանիցի, եւ այրն կին չառնիցէ եւ

յապաշխարութիւն եկեացէ, հինգ ամ ի դրունս եւ երեք ամ ընդ ձեռամբ
հաւասարեացի աղօթից, ի ձեռն ողորմութեան քաւեալ՝ հաղորդեցի: Նաեւ գայս
եւս եղաք յառաջ եղեալսն մեր դատաստան, որպէս որ նախ քան գայս ի գլխի
ցուցաք, եթէ կամօք միմեանց ամուսնանալ ասացաք: Եւ զի ըստ կանոնաց ոչ
կարծեցեալ, զոր եղաք ի լրոյ, զկանոնականս առցեն բան եւ այնպէս անկարծիս
դատեցեն: Միանգամայն ի գիրս դատաստանի, որ ինչ ընդդէմ գրոց կարծի
հրամանի, զգրոցն առնելով՝ անբանբաս զմեզ թողցեն, զի ոչ հակառակ ենք
աստուածական հրամանացն, այլ ի լրոյ զճշմարտիցն եղաք ներմամբ զբան:
Սակայն ի կամսն ապաստան է ընդունողաց եւ կամ ոչ, եւ յաղագս այտորիկ
սիրով ընդ մեզ լիջիք եւ մի՛ վայրապար զմերս համարեսջիք զսակաւ վաստակ:

ԳԼՈՒԽ ԾԽԷ ՎԱՄՆ ՍԱՐԿԱԲԱԳԱՅ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԱՆԱՅՍ

Վասն որ պատրաստեալ են ի քահանայութիւն եւ ունիցին կանայս, թէ մինչչեւ ի
քահանայութիւն մերձեալ իցէ, եւ կինն շնայցէ, արձակիցէ զկինն, եւ առն չիշխէ
լինել, եւ այրն ի քահանայութիւն մատիցէ: Ապա եթէ կամք իցեն կեալ ընդ նմա
առն, քահանայ ոչ կարէ լինել, զի ոչ ընդունի զնա եկեղեցին եւ ոչ կանոնք:
Իշխան առնէ յերկաքանչիւրսն. եւ աշխարհական կանանց ամուսնանալ զկնի
առն մահուանն կամի, իսկ դոցա՝ ոչ: Բայց տեսցի ընդունելի դատաստանաւ: